Շրջակա միջավայրի նախարար
պարոն Հ. Սիմիդյանին

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը.**
   Նոնա Բուդոյան
2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Կլիմայական քաղաքականության վարչության պետ
3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Այցելություն Թուքիայի Հանրապետություն՝ 2024 թվականի հունվարի 16-ից 19-ը
4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**
   Միավորված ազգերի կազմակերպության կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խմբի քարտուղարություն
   **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խմբի վաթսուներորդ նստաշրջանին: Հանդիպման նպատակն էր քննարկել և հստակեցնել ԿՓՄԽ-ի հատուկ և համակցված զեկույցների մշակման ժամկետները, առաջիկա տարիների աշխատանքային պլանը, իրականացվելիք միջոցառումները, յոթերորդ գնահատման զեկույցի մշակումը: Կարևորվեց ԿՓՄԽ-ի աջակցությունը և անգնահատելի դերը 2027 թվականի սկզբին մեկնարկող երկրորդ գլոբալ գույքագրման աշխատանքներում, ինչի ավարտը նախատեսվում է 2028 թվականին: Վերջինս նաև օժանդակություն կցուցաբերի զարգացող երկրներին թարմացնելու իրենց Ազգային մակարդակով սահմանված գործողությունները (ԱՍԳ-ները) 2025 թվականին:
5. **Քննարկված թեմաները (հարցերը).**
   Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել անդամ երկրների առաջարկություններին և դիտարկումներին ԿՓՄՄԽ-ի աշխատանքային ծրագրի, յոթերորդ գնահատման զեկույցի վերաբերյալ:
   Մասնավորապես քննարկվել է.
   - 2023, 2024, 2025 և 2026 թվականների բյուջեն,

- առաջիկայում նախատեսվող միջոցառումները,
- միջկառավարական խմբի քարտուղարության ներքո գործող աշխատանքային խմբերի միջև համագործակցությունը, ինչը պետք է սերտացվի
- ջերմոցային գազերի տվյալների հավաքագրման առցանց հարթակի գործարկումը,
- ԿՓՄԽ-ի կրթական ծրագրերը,
- ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի քարտուղարության ներքո ընթացող բանակցային գործընթացների արդյունքները և ԿՓՄՄԽ կողմից դրանց միջամտելու, աջակցելու հնարավորությունը:

6. **Հանդիպումները, ելույթները.**

Հանդիպման ընթացքում ելույթներ նախատեսված չէին: Հանդիպումը կայացել է ինտերակտիվ քննարկումների ձևաչափով՝ վերոնշյալ հարցերի շուրջ տեքստային տարբերակիների քննարկման և քվեարկման միջոցով:

7. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

- ԿՓՄԽ-ի կրթաթոշակային ծրագիրը տրամադրում է կրթաթոշակներ զարգացող երկրների ասպիրանտներին իրականացնելու հետազոտություններ, որոնք նպատակաուղղված են կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմանն ռիսկերի, դրանց ազդեցությունների գիտահեն գնահատմանը: Որոշում կայացվեց ստեղծել բյուրո՝ կրթաթոշակին դիմելու հայտերի ընդունման, գնահատման համար:
- Ջերմոցային գազերի տվյալների հավաքագրման առցանց հարթակը երկրներին հնարավորություն կտա հետևելու աշխարհում ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանը: Որոշվեց մինչև ունիս վերջնականացնել առցանց հարթակը:
- Երկրները համաձայնվեցին նաև մշակել երկրորդ հատուկ հաշվետվություն, ինչը կառաջարկի արդյունավետ լուծման մեխանիզմներ կլիմայի փոփոխության հարմարվողականության, վնասների և կորուստների համար:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Որոշվեց ԿՓՄՄԽ անդամ երկրներին ուղարկել 6-րդ գնահատման զեկույցները և հատուկ զեկույցները՝

1. Հատուկ զեկույց 1.5°C գլոբալ տաքացման համար,
2. Հատուկ զեկույց կլիմայի փոփոխության և հողերի մասին,
3. Հատուկ զեկույց օվկիանոսների և կիրոսֆերայի մասին փոփոխվող կլիմայի պայմաններում

6-րդ գնահատման զեկույցներ

1. Կլիմայի փոփոխությունը հիմնված ֆիզիկակայի վրա, 2021

2. Կլիմայի փոփոխություն - Ազդեցություն, հարմարվողականություն և խոցելիություն, 2022
3. Կլիմայի փոփոխության մեղմում, 2022
4. Համակցված հաշվետվություն, 2023

*Գործուղվող* *Նոնա Բուդոյան*
*26.01.2024*